

ԻՐԱՎԱԴԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ջ.Հ.ՀԱՎԱՌԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո սկսված իրավական համակարգի բարեփոխումը իրավաբան գիտնականների առջև դրեց մի շարք կարևոր և միաժամանակ բարդ հիմնախնդիրներ, որոնց լուծումից էր կախված մեր հասարակության իրավական վերնաշենքի հետագա ժողովրդավարացումը: Այդ հիմնախնդիրների թվում հատկապես արդիական դարձավ իրավունքի և օրենսդրության ընդհանրության ու տարբերության ուսումնասիրության հիմնախնդիրը:

Այսօր Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական կյանքի իրավական հիմքի ամրապնդման տեսությունը և պրակտիկական պահանջում են մեր հասարակության իրավական վերնաշենքի մյուս տարրերի, այդ թվում՝ իրավունքի և դրա արտահայտման ձևի՝ օրենսդրության հետ իրավունքի հարաբերակցության մեթոդաբանական իմաստավորում և հետազոտում: Մեր կարծիքով, մինչ այդ անհրաժեշտ է պարզաբանել նշված երկու կատեգորիաների՝ «իրավունքի» և «օրենսդրության» բովանդակությունը: Ի՞նչ է իրավունքը: Իրավաբանական գրականության մեջ տրված չէ այդ հարցի միանշանակ պատասխանը: Գոյություն ունեն իրավունքի ժամանակակից տարբեր սահմանումներ. «Իրավունքը համընդհանուր մասշտաբ է», «Իրավունքը ազատության չափն է», «Իրավունքը պետության կողմից ընդունված և նրա պաշտպանության տակ վերցված իրավաբանական նորմերի համակարգ է», «Իրավունքը հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի ամբողջությունն է»¹: Առանձին իրավաբան գիտնականների պատկերացումներում իրավունքը դեռևս մնում է «որպես օրենքի վերածված կամք», որի բովանդակությունը պայմանավորված է ժողովրդի կյանքի նյութական պայմաններով, կամ «որպես ընդհանուր կամք», այսինքն՝ ողջ հասարակության, ազգի կամ ժողովրդի կամք²:

Օրենսդրությունն իրավաբանական գրականության մեջ սահմանվում է ավելի հստակ և միանշանակ³: Վաղուց ի վեր ապացուցված է, օրինակ, որ իրավունքն ունի ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին ձև, որը հաճախ անվանվում է իրավունքի աղբյուր: Իրավունքի արտաքին ձևերը (իրավունքի աղբյուրները) տարատեսակ են՝ իրավական սովորույթներ, դատական և վարչական մախադեպ, պետական իշխանության և կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտեր, նորմատիվ պայմանագրեր: Լայն իմաստով՝ օրենսդրությունն իրավունքի արտաքին առարկայացման առավել զարգացած և, որպես կանոն, ժամանակակից ձևն է⁴: Հայաստանի

¹ Տես В.Н.Хропанюк, Теория государства и права, М., 1995, с. 188 – 195; Г.В.Назаренко, Учебное пособие, М., 1998, с. 57; Теория государства и права. Курс лекций Н.И.Матузова, А.В.Малько, М., 1997, с. 137 – 139, 143 – 145; В.А.Четвернин, Понятие права и государства. Учебное пособие для вузов, М., 1997, с. 71, 75, 79 – 80.

² Տես Теория государства и права. Курс лекций под ред. М.Н.Марченко, М., 1996, с. 293.

³ Տես Р.З.Лившиц, Теория права, М., 1994, с. 111 – 113.

⁴ Տես Общая теория государства и права. Академический курс в двух томах, т. 2. Теория права. отв ред. М.Н.Марченко, М., 1998, с. 236 – 238.

ժողովրդավարական հասարակությունում օրենսդրությունն իրավունքի աղբյուրների կարևորագույն տարատեսակ է, քանի որ երկրի պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմինների կողմից ընդունվող իրավաբանական օրենքներն ունակ են առավել շատ արտահայտելու ժողովրդի կամքը, ապահովելու հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման համընդհանուր նշանակությունը, պետական համապարտադրությունը, որը, վերջին հաշվով, թելադրված է շուկայական հարաբերությունների զարգացման պահանջներով: Օրենսդրության առանձնահատուկ դերը կանխորոշվում է հայկական իրավական պետության ժողովրդավարությամբ և սոցիալական գործընթացների վարման ընթացքում նրա ակտիվ դերով: Օրենսդրության մեջ իր ուղղակի արտահայտությունն է գտնում Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը: Ելնելով դրանից՝ օրենսդրությունը եղել և մնում է հայրենական իրավաբանական գիտության մանրագին վերլուծության առարկա: Այդ վերլուծությունն իր նպատակին է հասնում, եթե չի սահմանափակվում իրավաբանական տեխնիկայի հարցերով, ներթափանցում է իրավունքի բովանդակության մեջ, բացահայտում է դրա առարկայական պայմանականությունը, ցույց է տալիս Հայաստանի Հանրապետությունում ընդունված օրենքների կատարելագործման ուղիները:

Հատկանշական է, որ վերջին տարիները բնութագրվում են հայկական իրավական պետության օրենսդրական գործունեության նկատելի ակտիվացմամբ, որի գագաթնակետը Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության ընդունումն էր: Մեր պետության հիմնական օրենքի ընդունումն իր հերթին պահանջում է օրենսդրության հետագա կատարելագործում, այդ թվում՝ դրա լիովին հմապատասխանեցում Սահմանադրությանը:

Համաշխարհային իրավական գիտության պահանջներին համապատասխան՝ անհրաժեշտ է տարբերել օրենսդրության «ուղղահայաց» և «հորիզոնական» համակարգերը⁵: Առաջինը կանխորոշված է իրավաստեղծ գործունեություն իրականացնող պետական մարմինների համակարգով: Ամբողջ ընթացիկ օրենսդրությունը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, պետական կառավարման մարմինների իրավական ակտերը չեն կարող հակասել օրենքին, դրանց ողջ գործունեությունը ենթակա է օրենքին: Այսպիսով, «ուղղահայաց» համակարգն ապահովում է իրական օրինականության սկզբունքը: Օրենսդրության «հորիզոնական» համակարգի միասնությունը իրականացվում է դրա ներկրպուրացման և օրենքների կոդավորման միջոցով: Օրենսդրության այդ համակարգն այս կամ այն կերպ համապատասխանում է իրավունքի համակարգին, չի կարող այն հաշվի չառնել: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ հաստատվում է, որ իրավունքի և օրենսդրության համակարգերը հարաբերակցվում են որպես բովանդակություն և ձև⁶: Իհարկե, շարադրվածից ամենևին չի հետևում, որ օրենսդրության որևէ համակարգ պետք է և կարող է իրականացվել ըստ իրավունքի ճյուղերի: Շատ երկրներում, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում, գոյություն ունեն ոչ միայն ճյուղային, այլև միջճյուղային օրենսգրքեր, իսկ, ներկրպուրացման արդյունքները հաճախ կառուցվում են

⁵ Այս մասին տես Р.З.Лившиц, *Уч. зап.*, էջ 111 – 128:

⁶ См. В.Н.Дмитрук, *Теория государства и права. Учебное пособие*, Минск; 1998, с.74 – 76.

ըստ կառավարման և ոչ թե ըստ իրավունքի ճյուղերի⁷: Մակայն որքան մոտ է օրենսդրության համակարգում իրավունքի համակարգին, այնքան կատարյալ է, քանի որ ավելի նույնական է արտացոլում իրավունքի բովանդակության ներքին կառուցվածքը:

Նշենք, որ իրավունքի արտաքին ձևն ուղղակիորեն կապվում է դրա բովանդակության և ներքին ձևի հետ: Չնայած հարաբերական ինքնուրույնությանը, և նույնիսկ հենց դրա համար, արտաքին ձևը հակադեցություն է գործում իրավունքի անմիջական բովանդակության և ներքին ձևի վրա: Հետևաբար, օրենսդրության համակարգման նշանակությունը միայն այն չէ, որ հեշտացնում է նորմատիվ ակտերի օգտագործումը: Համակարգումը կարող է վերացնել իրավաբանական նորմերի միջև եղած հակասությունները, վերացնել իրավունքում առկա հիմնախնդիրները, նորացնել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը, կատարելագործել գործող իրավունքը, դրա բովանդակությունը և կառուցվածքը: Միաժամանակ, ոչ միայն անբույլատրելի է օրենսդրությունը իրավունքից կտրելը, այլ նաև այն իրավունքին նույնականացնելը⁸: Սովորական պատկերացմամբ՝ իրավաբանական օրենքը և իրավունքը հաճախ նույնացվում են: Գիտության մեջ այդպիսի նույնացումը հատկանշական է իրավաբանական պոզիտիվիզմին: Իրավունքի և օրենքի միախառնումը հանգեցնում է ֆորմալիզմի և դոգմատիզմի, բովանդակությունը փոխակերպվում է դրա արտահայտման ձևին:

Բնականաբար, իրավունքի և օրենքի հարաբերակցության առաջին և վճռորոշ կողմը դրանց ընդհանրությունն է: Միայն ընդհանրության մեջ են իրավունքը և օրենսդրությունը հանդես գալիս որպես իրավական համակարգի նորմատիվ տարրեր: Դա է ժողովրդավարական հասարակության իրավական համակարգի օրինաչափություններից մեկը, որտեղ պետության կողմից ընդունված կամ վավերացված, օպերատիվության, համակարգվածության հատկանիշներով օժտված գրավոր փաստաթղթերում հստակորեն և որոշակիորեն իրավական նորմերի բովանդակությունն արտահայտող նորմատիվ ակտերը հանդես են գալիս, ըստ էության, որպես իրավունքի արտահայտման միակ ձև: Հետևաբար, իրավունքը՝ որպես իրավաբանական երևույթ, իրավական համակարգի՝ արտահայտման անհրաժեշտությամբ օժտված նորմատիվ բաղադրիչ, ամրագրվում է գործող օրենսդրության համակարգում: Հենց իրավունքի նորմերի բովանդակությունը, դրանց համասոցիալական էությունը կանխորոշվում են ժողովրդավարական հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական օրինաչափություններով: Դրա հետ մեկտեղ, նորմատիվ ակտերի ընդունման, վավերացման առումով այդ պետության գործունեությունն այն անմիջական ուժն է, որը ստեղծում է իրավունք, դրան հաղորդում պետական-իշխանական թելադրանքի համապարտադրության որակ: Վերջին հանգամանքին իրենց ուշադրությունն են սևեռում այն գիտնականները, որոնք իրավունքը և օրենքը դիտում են որպես միևնույն կարգի երևույթներ: «Եթե իրավունքը սահմանվի իրավական երևույթների ձևի միջոցով, – գրում է Վ.Չետվերնինը, – օրինակ՝ օրենքի, և այդպիսի ձևական սահմանումը համարվի բավարար, ապա դուրս

⁷ Стн В. М. Сырых, Теория государства и права. Учебник, М., 1998, с. 173 – 183.

⁸ Стн С. А. Комаров, նշվ. աշխ., էջ 236 – 239;

կգա, որ իրավունքը և օրենքը նույնն են»⁹։ Հենց այդպիսի դատողություններն են հող ստեղծում իրավունքի խորը մեկնաբանման հայեցակարգի կառուցման համար։ Դրանով է առաջին հերթին բացատրվում այն հանգամանքը, որ իրավունքի և օրենքի հարաբերակցության հիմնախնդիրը հատուկ կարևորություն է ստանում շուկայական հարաբերությունների զարգացման ներկայիս պայմաններում, որոնց բազմազանությունը և դինամիզմը անխուսափելիորեն պահանջում են դրանց ուսումնասիրում՝ մեր երկրում, իրավական հետազոտությունների նվաճված մակարդակի դիրքերից¹⁰։ Արդարացի իրավունքի մասին գաղափարների տեսակետից գործող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների արգասավորությունը ցանկալի համարելով հանդերձ, հարկ է ընդգծել, որ դրա լայն ըմբռնման կողմնակիցները, կամա թե ակամա, տեղափոխում են շեշտադրումները և հիմնահարցը դիտարկում իրավունքի և իրավագիտակցության հարաբերակցության, դրանց առավել ակտիվ ձևերի՝ գիտական մակարդակով հասարակական իրավագիտակցության և պրոֆեսիոնալ իրավագիտակցության տեսանկյունից։

Ընդ որում, իրավունքի լայնորեն մեկնաբանման կողմնակիցները չպետք է անտեսեն նաև ժողովրդավարական հասարակության զարգացման այնպիսի միտումը, ինչպիսին մեղ, հատուկ իրավաբանական նշանակության իրավունքի աղբյուրների համակարգում օրենքի դերի բարձրացումն է՝ պետական իշխանության բարձրագույն մարմինների նորմատիվ ակտի առումով։ Արտահայտելով ժողովրդի կամքը և շահերը՝ իրավական պետության գիտականորեն հիմնավորված քաղաքականության հիման վրա ստեղծվող օրենքները լիովին համապատասխանում են իրավունքին՝ դրա սոցիալ-բարոյական իմաստով, դառնում են իսկապես արդարացի, ապստեղծում են իրական իրավաբանական հավասարություն։ Լինելով պետական և հասարակական կյանքի իրավական հիմքը՝ իրավունքը ժողովրդավարական հասարակությունում կենսագործվում է գործող օրենսդրության համակարգում։ Պատահական չէ, որ իրավաբանական գրականության մեջ գերիշխում է այն կարծիքը, որ պետական և հասարակական կյանքի իրավական հենքը հանդես է գալիս նորմատիվ և գործառնության բաղադրիչների ընդհանրության տեսքով, այսինքն՝ օրենսդրությունում արտահայտված իրավունքների, օրինականության և իրավակարգի տեսքով։ Օրինականության ռեժիմ՝ նշանակում է հասարակական կյանքի այնպիսի վիճակ, որի դեպքում իրավահարաբերությունների մասնակիցներն ազատորեն իրագործում են իրենց պատկանող իրավունքները և պարտականությունները։ «Օրինականությունը, – գրում է Վ.Խրոպանյուկը, հասարակական կյանքում այնպիսի կարգի նախադրյալն է, որը համապատասխանում է իրավական նորմերի կարգադրագրերին։ Այլ խոսքով՝ օրինականության գործողության հետևանքով հասարակության մեջ ձևավորվում է իրավական կարգ, որը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման նպատակն է»¹¹։ Իսկ ինչ վերաբերում է իրավակարգին, ապա այն ներկայանում է հասարակական

⁹ Ст'ю В. А. Четвертин, Понятия права и государства. Введение в курс теории права и государства. Учебное пособие для вузов, М., 1997, с. 36.

¹⁰ Ст'ю В. Теория государства и права. Учебник для вузов, М., 1998, с. 232 – 233.

¹¹ В. Н. Хропанюк, նշվ. աշխ., էջ 348 – 349։

հարաբերությունների համակարգի տեսքով, որը հաստատվում է իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից՝ իրավական նորմերի կարգադրերի հստակ և լիովին իրականացման շնորհիվ: Մի խոսքով, իրավակարգը ձևավորվում է իրավունքի նորմերի պահպանման, կատարման, օգտագործման և կիրառման շնորհիվ: Ինչպես արդարացիորեն նշում է Ս.Կոմարովը, դրա ոլորտում են գտնվում իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական բոլոր հարաբերությունները¹²:

Հատկանշական է, որ դրանով իսկ ընդգծվում է իրավունքի և օրենսդրության ընդհանրության ևս մեկ սահմանագիծ: Հասարակական մեխանիզմի ճիշտ զարգացման ապահովման գործում մեծ դեր է պատկանում հստակ մշակված օրենսդրությանը: Իրավունքը, օրինականությունը և իրավակարգը հասարակության բնականոն կյանքի, նրա քաղաքացիների օրինական իրավունքների և շահերի պաշտպանության հիմքը, դրանց անձեռնմխելիության երաշխիքն են¹³: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության կողմից ընդունվող փաստաթղթերում պետական ու հասարակական կյանքի իրավական հիմքի ամրագրումն անմիջականորեն կապված է օրենսդրության կատարելագործման, պետության տարածքում իրավակարգի ու օրինականության ամրապնդման հետ: Դրանցում «իրավաբանական նորմեր», «իրավունք», «օրենքներ» եզրերը հաճախ օգտագործվում են որպես միևնույն կարգի հասկացություններ: Այդ սկզբունքային դրույթները, որոնք ծառայում են որպես իրավունքի և օրենսդրության (դրանց ընդհանրության տեսակետից) հարաբերակցության ճանաչման մեթոդաբանական բանալի, ունեն գործնական կարևոր նշանակություն:

Ինչպես արդեն նշվեց, իրավունքի և օրենսդրության ընդհանրությունը՝ որպես արտահայտման ձև, չի նշանակում, սակայն, դրանց հավասարություն: Դրանց միջև տարբերությունը սովորաբար մատնանշվում է՝ ելնելով իրավունքի աղբյուրների բազմազանությունից: Այսպես, իրավունքի անգլոսաքսոնական համակարգի համար հատկանշական են այնպիսի աղբյուրներ, ինչպես նորմատիվ ակտերը (օրենսդրություն), վավերացված սովորույթները, դատական և վարչական նախադեպերը¹⁴: Սակայն աշխարհի բազմաթիվ քաղաքակիրթ պետություններում իրավունքը հիմնվում է եզակի աղբյուրի՝ նորմատիվ ակտի վրա, այսինքն՝ արտահայտվում է առավելապես գործող օրենսդրության համակարգում: Այդուհանդերձ որոշմը են, այդ դեպքում, իրավունքի և օրենսդրության միջև տարբերությունների սահմանագծերը: Հարկ է նշել, որ Իրավունքի խորը մեկնաբանման կողմնակիցները, բացի նորմերից, որոնք արտահայտված են օրենսդրությունում, ներառում են իրավաբանական վերնաշենքի՝ իրավահարաբերության և իրավագիտակցության մաս ալ բաղադրիչներ¹⁵: Մի կողմ թողնելով իրավունքի ընդհանուր հասկացության մասին հարցը՝ նշենք, որ, հազիվ թե արդարացված լինի ինքնին իրավունքի և դրա դրսևորումների նույնացումը, առավել ևս, որ դրանց նշանակության համար ձևավորվել են հավաքական կառուցվածքներ՝

¹² С. А. Комаров, Общая теория государства и права. Курс лекций, М., 1996, с. 277.

¹³ Ն. Ա. Ապիյան, Ա. Հ. Պետրոսյան, Իրավական պետություն և օրինականություն, Ե., 1999, էջ 137 – 149:

¹⁴ Տես Ն. Խրոպանյուկ, նշվ. աշխ., էջ 185 – 186; Ն. Դմիտրյուկ, նշվ. աշխ., էջ 62; Ե. Դ. Կոմարով, Энциклопедия права, – СПб., 1998, с. 100 – 102.

¹⁵ Տես Ե. Դ. Կոմարով, նշվ. աշխ., էջ 89 – 90, 152 – 153; Ս. Ա. Ալեքսեև, Философия права, М., 1997, с. 22 – 23; Ն. Դմիտրյուկ, նշվ. աշխ., էջ 86:

«իրավական վերնաշենք», «իրավական համակարգ», «իրավական կարգավորման կառուցակարգ»:

Իրավունքի և օրենսդրության տարբերության կողմերից մեկն արմատավորվում է իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի ներքին հատկանիշներում, որակներում: Լինելով իրավաբանական երևույթ՝ այն ըստ բովանդակության և հատկանիշների, հարուստ է օրենքով, որն իրավական որոշակի ֆենոմենների իրավունքի «կարգավիճակ», իրաբունքի կացութաձև հաղորդելու միջոց է¹⁶: Իր ողջ տարողունակությամբ ու բազմաճյուղությամբ հանդերձ, «իրավունքն ազատության չափն է», կառուցվածքն անմիջականորեն կապված է իրավական ակտին նորմատիվայնության և համապարտադրության հատկանիշների վերագրման հետ (տարբեր սուբյեկտների նկատմամբ հավասարաչափ կիրառում, պետական երաշխավորվածություն, դիմակայում՝ անձնական հայեցողությանը, կամայականությանը, քառսին): Նորմատիվ իրավական հատկանիշների բացակայության դեպքում իրավական ակտը հանդես չի գալիս որպես իրավունքի աղբյուր. արտաքուստ (ըստ ձևի) միանման իրավական ակտերը կրող են լինել կամ նորմատիվ՝ իրավական նորմեր պարունակող, կամ՝ անհատական իրավական կարգադրագրեր: Դրա հետ մեկտեղ իրավունքի հատկանիշներով կարող են օժտվել արաքուստ օրենքի ձևով հանդես չեկող նորմատիվ ակտի դրույթները: Դրանց թվին են դասվում, օրինակ, այնպիսի իրավաբանական գոյացություններ, ինչպես ղեկավար բացատրագրերը, որոնք ըստ բովանդակության և հատկանիշների, մոտենում են իրավական նորմերին, իրավունքին, սակայն ամբողջությամբ չեն համընկնում դրանց: Լինելով իրավական յուրահատուկ գոյացություններ՝ դրանք պրոֆեսիոնալ իրավագիտակցության «կոշտուկներ» են՝ իրավական նորմերի վերանելու սահմանագծին¹⁷:

Որոշակի դժվարություն է ներկայացնում իրավունքի, ընդհանուր առմամբ՝ տվյալ հասարակության իրավական համակարգի հիմնական հատկանիշներին առանձին օրենքի համապատասխանության աստիճանի հարցը: Իրավական համակարգին առանձին նորմատիվ ակտերի համապատասխանության աստիճանի ճանաչման մեթոդաբանական հիմք է ծառայում իրավունքի էության մեկնաբանումը՝ որպես «համընդհանուր չափագիծ»: Օրենսդրության մեջ արտահայտված իրավունքը օրենսդրի «ազատ» կամքի, կամայականության արդյունք չէ: Վերջինս չի կարող ստեղծել, կառուցել իրավաբանական նորմեր՝ հաշվի չառնելով հասարակության զարգացման որոշակի փուլում նրա կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները, մշակութային և հոգևոր ներգործությունները:

Պրակտիկայից կարելի է բերել օրինակներ, երբ օրենքները զրկվում են կարգավորիչ հատկանիշներից, դառնում են գործող իրավական համակարգին հակահունչ: Ամենից աաջ դրանք այն օրենքներն են, որոնք կամայականության, սուբյեկտիվիզմի ակտեր են, այն օրենքները, որոնք ավելի շուտ անհատական, քան հասարակական իրավագիտակցության ծնունդ են և որոնք նույնությամբ արտացոլում են տվյալ ժողովրդավարական հասարակության զարգացման որոշակի փուլում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման սոցիալ-տնտեսական, մշակութային և գաղա-

¹⁶ Տե՛ս Р.З.Лившиц, *Уч.зп.*, т.2 111 – 122.

¹⁷ Տե՛ս С.С.Алексеев, *Социальная ценность права в советском обществе*, М., 1971, с. 139.

փարախոսական պահանջումները: Ընդ որում, հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ օրենքն ընդունվում է այդ պահանջումքին հակառակ և անգործության է մատնվում իր ողջ գոյության ընթացքում կամ երբ այն ընդունվել է ժամանակից շուտ, քանի որ դրա իրագործման համար չեն ստեղծվել անհրաժեշտ պահանջներ, և այն սկսում է գործել միայն համապատասխան պայմանների և անհրաժեշտ նախադրյալների ստեղծումից հետո:

Գործնականում հնարավոր է և այնպիսի տարբերակ, երբ օրենքը նվազեցնում է իր կարգավորիչ հատկանիշները՝ իրեն ծնող սոցիալ-տնտեսական պայմանների անհետանալու հետևանքով: Այսպես, 1990-ական թվականների սկզբին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, մի շարք հին իրավական ակտեր, օրինակ, աշխատանքային օրենսգիրքը, արդեն չհամապատասխանելով շուկայական հարաբերությունների պահանջներին, չնայած պաշտոնապես չեղյալ չի համարվել, սակայն իրական մոդ պայմաններում փաստորեն անգործության է մատնվել և օրգանապես չի ներառվում հայ հասարակության իրավական համակարգում՝ նրա զարգացման մոդ փոխում:

Ժողովրդավարական հասարակությունում սեփականության բոլոր ձևերը, ժողովրդավարության և իրավաստեղծ գործունեության սոցիալ-տնտեսական, գաղափարախոսական, իրավաբանական մյուս երաշխիքներն ու սկզբունքներն ապահովում են իրավունքի և օրենսդրության օրգանական միասնությունը: Ընդ որում, իրավունքը՝ որպես հասարակական հարաբերությունների արդյունավետ համասոցիալական կարգավորիչ, զարգացած իրավական համակարգի նորմատիվ բաղադրիչ, կենսագործվում է իրավական պետության գործող օրենսդրության համակարգում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է ասել, որ իրավունքը և օրենսդրությունը սերտ փոխկապակցված ինքնուրույն կատեգորիաներ են, որոնք ներկայացնում են իրավունքի միևնույն էության երկու տեսանկյուններ, որոնք հարաբերակցվում են որպես ձև և բովանդակություն: Իրավունքը գոյություն չունի օրենսդրությունից դուրս, իսկ օրենսդրությունը՝ դրա ամենալայն իմաստով, հենց իրավունքն է: Սակայն իրավունքը և օրենսդրությունը նույնը չեն: Դրանց միջև կան էական տարբերություններ, որոնք թույլ են տալիս խոսելու դրանց հարաբերական ինքնուրույնության մասին: *Առաջին*, իրավունքի սկզբնական տարրը համարվում է նորմը, իսկ իբրև օրենսդրության սկզբնական տարր հանդես է գալիս նորմատիվ իրավական ակտը: *Երկրորդ*, օրենսդրությունը, ըստ պարունակած նյութի ծավալի, լայն է իրավունքից, որովհետև ներառում է դրույթներ, որոնք չեն կարող վերագրվել իրավունքին, օրինակ, տարբեր տեսակի նորմատիվ դրույթները: *Երրորդ*, իրավունքի, ճյուղերի և հաստատությունների բաժանման հիմքում ընկած են իրավական կարգավորման առարկան և մեթոդը: Պետկան կյանքի որոշակի բնագավառներ կարգավորող օրենսդրության ճյուղերն էլ առանձնանում են միայն կարգավորման առարկայով և չունեն ընդհանուր մեթոդ: *Չորրորդ*, եթե իրավունքը կրում է օբյեկտիվ բնույթ, ապա օրենսդրությունը մեծապես սուբյեկտիվ գործոնի ազդեցության ներքո է և մեծ մասամբ կախված է օրենսդրի կամքից:

Իրավունքի և օրենսդրության միջև օրինաչափ հարաբերակցության հաստատումը ոչ միայն տեսական, այլև գործնական բացարձակ կարևոր խնդիր է: Դրա լուծումը կարող է ապահովել երբեմն միմյանց հակասող

ակտերի ոչ անհրաժեշտ բազմակիության կրճատումը, ինչպես և այն ակտերի համաձայնեցվածությունը, որոնք օգտակար են հասարակությանը և պետությանը, կազմակերպել պրակտիկայում դրանց օրինաչափ կիրառումը՝ ցանկալի ուղղությամբ:

СООТНОШЕНИЕ ПРАВА И ЗАКОНОДАТЕЛЬСТВА

Дж. А. АКОПЯН

Резюме

Единство права и законодательства, как форма его выражения, не означает, однако, их тождества. Одна из сторон различия права и законодательства коренится во внутренних свойствах, качествах права как общесоциального регулятора общественных отношений. Будучи юридическим явлением, оно по своему содержанию, свойствам богаче закона, который есть средство придания определенным правовым феноменам “статуса” права, формы бытия права.